



2

Եվրոպայում կրակ է, Արգենտինայում՝ ձյուն

Սեւանա լիճ. ջրահեղձվածներ եւ փրկվածներ

4



Սեւ մահը. համաճարակներ

5

Առաջին փրկարարական ջոկատը 20 տարեկան է



6

ISSN 1829-149X



0 9 0 2 8



9 771829 149003

արտակարգ թերթ

№ 28 (301) 31.7.2009 - 6.8.2009 www.emergency.am

Հայաստանի փրկարար ծառայությունն ամփոփում է առաջին կիսամյակի արդյունքները

Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունն անցյալ շաբաթ ամփոփեց 2009թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքներն ու տեղի ունեցած դեպքերի վիճակագրությունը: Ամփոփմանը ներկա էին ծառայության ղեկավար կազմը եւ կառուցվածքային ստորաբաժանումների բոլոր ղեկավարները:



Անցած 6 ամիսների ընթացքում Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունն անելիքներ շատ էր, որ ամբողջը ներկայացնելու համար Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Սերգեյ Ազարյանից մոտ մեկ ժամ պահանջվեց:

Այսպիսով՝ հաշվետվության տվյալների համաձայն՝ 2009 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի տարածքում գրանցվել է՝ 3266 արտակարգ դեպք, զոհվել է 215, մարմնական վնասվածքներ ստացել՝ 2642 մարդ: Տեղի ունեցած դեպքերից՝ 1645-ը տեխնիկական բնույթ են կրել, 220-ը՝ տարերային եւ 1401-ը՝ սոցիալ-կենցաղային:

2009թ.-ի առաջին կիսամյակում 760 հրդեհ է մարվել: Հրդեհների գերակշռող մասը հանրապետությունում՝ այդ թվում նաեւ մայրաքաղաքում, բռնկվել են բնակելի հատվածներում:

Վեց ամիսների ընթացքում երեւանում տեղի է ունեցել 3-րդ կանչի բարդության 5 հրդեհ: Դրանցից առանձնահատուկ է «Նաիրիտ» գործարանում բռնկված հրդեհը, որի մարմանը մասնակցել է 17 միավոր հրշեջ տեխնիկա, հրդեհաշիջման ընթացքում անձնակազմը դրսևորել է բարձր կամային հատկանիշներ ու անձնուրացություն, ինչի շնորհիվ էլ հաջողվեց կարճ ժամանակահատվածում մարել նման մեծ ծավալի հրդեհը: Գործընթացն անհամեմատ հեշտացրին 2008թ.-ին ստացված «Կամազ» մակնիշի ավտոմեքենաները, որոնց լաֆետային փողրակներից հնարավոր էր ջուրը մղել այրվող աշտարակի վերին մասերը:

Հատուկ-փրկարարական ստորաբաժանումներն արձա-

մադրվող դրամաշնորհի շրջանակներում: ճապոնիայում անց է կացվել մրցույթ, որի արդյունքում 2010թ. ծառայությանը կտրամադրվի 28 միավոր հրշեջ տեխնիկա:

Այս ժամանակահատվածում փրկարարական վարչությունների կողմից հանրապետության 165 համայնքներում եւ 5 օբյեկտներում կազմակերպվել ու անցկացվել են ուսումնավարժություններ եւ վարժանքներ:

Փրկարարները մի շարք գործնական պարապմունքներում իրենց հմտություններն են հղկել ջրափրկարարության եւ լեռնափրկարարության ոլորտներում:

Ձեկույցի ընթացքում ներկայացվեցին վերլուծություններ նյութատեխնիկական բազայի ամրապնդման, կառավարման մարմինների եւ բնակչության ուսուցման, միջազգային համագործակցության, հանրային իրազեկման կատարելագործման եւ ՀՓԾ գործունեության այլ ոլորտների վերաբերյալ:

Ամփոփելով անցած կիսամյակի արդյունքները եւ քննարկելով առկա խնդիրները՝ արվեցին հստակ առաջարկներ՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի հետագա կատարելագործման եւ զարգացման ուղղությամբ:

Փրկարար ծառայության տնօրեն Էդիկ Բարսեղյանը կարգադրեց բոլոր վարչությունների ու մարզային կառույցների ղեկավարներին աշխատել այնպես, որ 2009-ի երկրորդ կիսամյակն ավելի արդյունավետ լինի Հայաստանի փրկարար ծառայության համար՝ իսկ ՀՀ բնակչության համար առավել անվտանգ:

Այս եւ մյուս երկուշաբթի օրերին, ժամը 19.00-ին, 32 հեռուստաընկերության եթերում է «Արտակարգ ալիքը»
Կրկնությունը՝ ուրբաթ, ժամը 13.30-ին: Օգոստոսի 3-ին կարող եք դիտել.

«Սպիտակ» փրկարարական ջոկատը 20 տարեկան է: Այն հիմնվել է Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո՝ գերմանացի Գերարդ Մայերի կողմից: Առաջին անդամները Երեւանի ակադեմիական ակումբից էին, ովքեր 88-ին շտապել էին աղետի գոտի՝ տուժածներին օգնություն ցույց տալու համար:



Ինչպես էին ջոկատի անդամներն ու իրենց գերմանացի գործընկերները նշում այդ հոբելյանը:

3266 արտակարգ դեպք, 215 զոհ, մարմնական վնասվածքներ ստացել՝ 2642 տուժած: Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ղեկավար կազմն ու կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները հավաքվել էին ամփոփելու 2009թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքներն ու տեղի ունեցած դեպքերի վիճակագրությունը:

ՀՀ ԱԽՆ ՀՓԾ ղեկավարության ուշադրության կենտրոնում կրկին ջրափրկարարների խնդիրներն են: Վերջիններս էլ իրենց հերթին հիշեցնում են բնակչությանը. մի՛ լողացեք չվերահսկվող տարածքներում:

Այս եւ այլ թեմաների մասին՝ երկուշաբթի, 19.00-ին, 32-ի եթերում:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am


Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ծիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Յորդառապ անձրեւ եւ ուժեղ կարկուտ Լոռու մարզում

Յուլիսի 28-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ տեղացած հորդառապ անձրեւը եւ ուժեղ կարկուտը զգալի վնասներ են պատճառել մասնավորապես՝ վանաձորում ջրաբերուկներով լցվել է Սասունցիների փողոցի սելավատարը, փակվել ջրի հոսքը, ինչի հետեւանքով սելավաջուրը սկսել է հոսել Երեւանյան ու Չուխաջյան փողոցներով՝ լցվելով բնակելի շենքերի նկուղները: Վանաձորի քաղաքապետարանի կոնուրնալ բաժնի կողմից տրամադրված համապատասխան տեխնիկայի միջոցով սելավատարը բացվել է 80 տոկոսով եւ ջրի հոսքը նվազել է:

Սելավաջրերից խցանվել է նաեւ քաղաքի մեկ այլ՝ Մարգարյան փողոցի սելավատարը, ջրերը լցվել են տնամերձ հողամասերը: Փրկարարների ձեռնարկած վթարավերականգնողական միջոցա-

ռունների արդյունքում սելավատարը մաքրվել է, վերականգնվել է ջրի հոսքը:

«Արմենթել» ՓԲԸ-ից ստացված ահազանգի համաձայն՝ տեղացած հորդառապ անձրեւից առաջացած սելավաջրերը լցվել են Վանաձորի Ռեսուրսական 3 հասցեում գտնվող կապի կայանի նկուղային հարկը, ինչի հետեւանքով քաղաքի հեռախոսային կապի մի մասն անջատվել է: Դեպքի վայր մեկնած հրշեջ-փրկարարների կողմից նկուղից իրականացվել են ջրահեռացման աշխատանքներ եւ ժամը 02.35-ի դրությամբ հեռախոսակապը վերականգնվել է:

Ստացված մեկ այլ տեղեկության համաձայն՝ սելավաջրերը ջրաբերուկներով լցրել են Վանաձոր-Վլավերդի ավտոճանապարհը՝ Փամբակ եւ Չորագետավան համայնքների հատվածներում այն դարձնելով աներթելելի: Դեպքի մասին տեղյակ է պահվել ճանապարհային ոստիկանության Վանաձորի բաժինը:

Դեպքի վայր են ուղարկվել Լոռու «Ճանշին»-ից մեկ բրիգադ եւ համապատասխան տեխնիկա: Ավտոճանապարհը մաքրվել է եւ վերականգնվել է երթեւեկությունը:

Տեղացած հորդառապ անձրեւը եւ ուժեղ կարկուտը մեծ վնաս են պատճառել նաեւ Ազնվածոր եւ Շահումյան համայնքների բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքատարածքներին եւ պտղատու այգիներին, իսկ «Շա-

հունյանի առողջության առաջնային պահպանման կենտրոնի» կողքով հոսող գետակը դուրս է եկել ափերից, լցվել կենտրոնի նկուղը, մասամբ վնասել շենքի հիմքն ու կողային պատը:

Դեպքի վայր մեկնած Լոռու մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը տեղում կազմակերպել է կենտրոնի գույքի դուրսբերում:

Գեղը սպառնում է

Յուլիսի 27-ին, ժամը 12.40-ին Լոռու մարզում գտնվող Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղից տեղեկություն է ստացվել, որ մարզում շարունակվող հորդառապ անձրեւների պատճառով վարարած Տանձուտ գետը թշվառել է ափամերձ հողի շերտը, ինչի հետեւանքով վտանգ է սպառնում ակադեմիայի 5-հարկանի շենքին ու հարակից ճանապարհին: Դեպքի մասին տեղյակ է պահվել Լոռու մարզպետարանը:

Վարարում

Յուլիսի 29-ին, ժամը 10.40-ին Լոռու մարզից՝ Վանաձորի «Յայաստան առողջարան» համալիրից տեղեկություն է ստացվել, որ Վանաձոր գետի վարարումից քանդվում է առողջարանային համալիրին հարակից գետի ափապաշտպան պատնեշը:

Դեպքի վայր է մեկնել Լոռու մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը: Ժամը 21.20-ի դրությամբ գետի մակարդակը նվազել է, եւ պատնեշին վտանգ չի սպառնում:

Ընկել էր դիպահորը

Յուլիսի 28-ին Վանաձորի «1-03» ծառայությունից ստացված տեղեկության համաձայն՝ Սանկտ-Պետերբուրգի փողոցում

ջրահեռացման դիտահորը է ընկել նույն փողոցի թիվ 5-3-1-10 տնակի բնակիչ, 1997թ. ծնված Նարեկ Լոռյանը, եւ նրան դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Փրկարարների կողմից Ն. Լոռյանը դուրս է բերվել դիտահորից եւ մարմնի գերառեցումով ու զլխի վնասվածքով տեղափոխվել Վանաձորի «Նարեկ» մանկական հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է միջին ծանրությամբ:

Նոր զոհեր Սեւանում

Յուլիսի 23-ին Գեղարքունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ Սեւան լճից՝ Ծովագյուղի «Փիրուզե լողափ» տարածքում, ջրափրկարարների ուժերով դուրս է բերվել խեղդված՝ Վանաձորի Տիգրան Մեծի փողոցի թիվ 27 շենքի, 2-րդ բնակարանի բնակիչ, 1976 թ. ծնված Արման Յովսեփյանի դին:

Յուլիսի 24-ին, ժամը 11.45-ին ահազանգ է ստացվել, որ Սեւան լճում, «Ախթամար» լողափի տարածքում լողալու ժամանակ մարդ է խեղդվել եւ նրան դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Ահազանգը ստանալու ժամանակ ջրափրկարարների մոտորանավակը գտնվել է դեպքի վայրից մոտ 400 մ հեռավորության վրա: Փրկարարներն անմիջապես մեկնել են դեպքի վայր, եւ ժամը 11.53-ին լճից դուրս են բերել Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի բնակիչներ՝ 1991 թ. ծնված Գարիկ Թադևոսյանի եւ նրա հասակակից Աշոտ Յարյապետյանի դիակները:

Դիակ ձորում

Յուլիսի 24-ին, ժամը 08.06-ին

Երեւանի ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ Յրագդանի կիրճում՝ մանկական երկաթուղուց հարակից տարածքում հայտնաբերվել է դիակ եւ այն ձորից դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր մեկնած փրկարարները ժամը 09.20-ին ձորից դուրս են բերել անձը չպարզված, 25-28 տարեկան տղամարդու դի եւ հանձնել ոստիկանության աշխատակիցներին:

Գայլերի հարձակում

Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ հուլիսի 24-ի գիշերը գայլերի ունակ ինչ-որտեղ է Սիփան համայնքի բնակիչ Վահիկ Խուրդյանին պատկանող 20 զլուխ ոչխար:

Պարահար Սեւանում

Յուլիսի 28-ին, ժամը 17.20-ին Սեւան լճի «Քաղաքային» լողափի տարածքում ջրափրկարարները նկատում են քամու հետեւանքով ռետինե ներքնակով ափից հեռացող մի քաղաքացու: Սինչ փրկարարների հասնելը՝ քաղաքացին շրջվում է եւ ընկնում ջուրը: Ժամը 17.24-ին փրկարարները լճից դուրս են բերում Կոտայքի մարզի Յրագդան քաղաքի բնակիչ, 1981թ. ծնված Յայկ Դարիբյանին: Տեղում ստանալով առաջին բուժօգնություն՝ տուժածը հրաժարվում է տեղափոխվել հիվանդանոց:

Մեքենան ճահճի մեջ

Յուլիսի 27-ին, ժամը 03.22-ին ահազանգ է ստացվել, որ Սեւան-Գավառ ավտոմայրուղու 5-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: >>> 3

միջազգային լուրեր

Ա գրիպը տարածվում է աննախադեպ արագությամբ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱԶԿ) զգուշացնում է, որ H1N1 վիրուսը շուտով ընդգրկելու է ամբողջ մոլորակը: Այսօրվա դրությամբ վտանգավոր վիրուսը



հայտնաբերվել է ԱԶԿ 193 անդամ-պետություններից 160-ում: Յուլիսի 27-ի տվյալներով խոզի գրիպի զոհ է դարձել 816 մարդ: Միեւնույն ժամանակ ԱԶԿ ներկայացուցիչը հայտարարել է, որ հիվանդների մեծ մասը բավական

թեթեւ է տանում հիվանդությունը եւ հաճախ առողջանում է առանց բժիշկների օգնության:

Յուլիսի 28-ի դրությամբ Ռուսաստանի Դաշնության տարածքում հաստատվել է Ա գրիպի վիրուսով վարակման 30 դեպք:

Խոզի գրիպի վիրուս է հայտնաբերվել նաեւ Ադրբեջանում. վտանգավոր վիրուսով հիվանդացել է երկու քաղաքացի: Երկրի առողջապահության նախարարությունից հայտնել են, որ վիրուսը հայտնաբերվել է Բաքվում եւ Գյանջայում: Վարակակիրները երկիր են ժամանել Ֆրանսիայից եւ Մեծ Բրիտանիայից: Ըստ նույն աղբյուրի՝ հիվանդների վիճակը բավարար է եւ նրանք բուժման կուրս են ընդունում, հնարավոր է, որ մի քանի օրից դուրս գրվեն հիվանդանոցից:

Եվրոպայում կրակ է, Արգենտինայում՝ ձյուն

Իսպանիայում, Իտալիայի Սիցիլիա եւ Սարդինիա կղզիներում, Յունաստանում, Խորվաթիայում, ինչպես նաեւ Ֆրանսիական Կորսիկայում ուժեղ անտառային հրդեհներ են մոլեգնում:



Իսպանիայում կրակի զոհ է դարձել վեց հրշեջ-փրկարար: Հրկիզումները կազմակերպելու կասկածանքով ձերբակալվել է 15 մարդ: Հրդեհները տարածվել են Իսպանիայի գրեթե ամբողջ տարածքով եւ մոտեցել մայրաքաղաք Մադրիդին: Քաղաքի որոշ թաղամասերում կազմակերպվել է բնակչության տարահանում, փակվել է միջքաղաքային մի քանի երկաթգիծ:

Իտալիայում եւ Ֆրանսիայում իրավիճակն էլ ավելի է սրվում +40-ի հասնող ջերմաստիճանի պատճառով: Յունաստանում ծովը պատել է մայրաքաղաք Աթենքը:

ՄԱԿ-ի իրապարակած տվյալներով՝ ամեն տարի աշխարհում այրվում է շուրջ 350 միլիոն հեկտար անտառ: Փորձագետները

հանդգնում են, որ անտառային հրդեհների 95 տոկոսը բռնկվում է մարդկանց մեղքով:

Սինչ Եվրոպայի տառապում է շոգից եւ պայքարում է հրդեհների դեմ, Արգենտինայի հարավային եւ կենտրոնական շրջանների բնակչությունը սառչում է: Արգենտինայում ձմեռն ամիսներին, իսկ հիմա այնտեղ ձմեռ է, բնորոշ է +10 ջերմաստիճան: Սակայն այս անգամ օդի ջերմաստիճանը նվազել է մինչեւ -16: Որոշ շրջաններում տեղացած ձյան շերտը հասնում է 20-40 սմ-ի:

Ըստ կանխատեսումների՝ սառը եղանակը կպահպանվի եւս մեկ շաբաթ:

Տարերջի լծի փակ

Չինաստանում չեն դադարում տեղատարափ անձրեւները, որոնց զոհ է դարձել 36 մարդ:



Ջուրը փլուզել է տասնյակ կամուրջներ, հեղեղել ճանապարհներ եւ բազմաթիվ սողանքների պատճառ դարձել:

Հագարավոր մարդիկ ստիպ-

ված են եղել լքել իրենց տները: Շատերը համարվում են անհետ կորած: Յունան շրջանում ջուրը բարձրացել է երեք մետրով եւ հեղեղել հարյուրավոր բնակելի տներ:

Սողանքներից մեկի հետեւանքով Գուանդուն շրջանում տեղի է ունեցել երկաթուղային վթար. ռելսերից դուրս է եկել ուղեւորատար մի գնացք, զոհվել է չորս եւ վնասվածքներ ստացել մոտ 50 ուղեւոր:

Հասցրած վնասի չափերն արդեն հասնում են հարյուր միլիոն դոլարի:

Կարիբյան ծովում նավ է խորտակվել

Կարիբյան ծովում՝ Տերքս եւ Կայկոս կղզիների մոտ նավ է խորտակվել: Արտասահմանյան լրատվամիջոցների հաղորդմամբ՝ հաջողվել է փրկել 113 մարդու կյանք: Փրկարարները ջրից հանել են չորս մարդու դի:

Կենդանի մնացած ուղեւորներին ափ են հանել նավակների եւ ուղեւորների օգնությամբ:

Ըստ նախնական տեղեկությունների՝ նավում եղել է 160-200 մարդ: Մյուս ուղեւորների ճակատագիրն առայժմ անհայտ է մնում: Որոշողափրկարարական աշխատանքները շարունակվում են:

Ֆախնա Թյունիբաբյան



արագ արձագանքման ծառայություններ

<<< 2 Դեռևս չպարզված հանգամանքներում Ա. Վարդապետյանին պատկանող «ՎԱԶ-21010» մակնիշի 15LU337 պ/հ ավտոմեքենան դուրս էր եկել ճանապարհի երթևեկելի մասից ու ընկել ճահիճը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, եւ հրշեջ-փրկարարների ուժերով ավտոմեքենան դուրս է բերվել ճահիճից:

Ջոհեր ու վիրավորներ չկան:

Բեռնափարը գլորվել էր ձորը

Հուլիսի 28-ին Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ Գորիս-Իշխանասար ավտոճանապարհի 35-րդ կիլոմետրում, դեռևս չպարզված հանգամանքներում, «ԳԱԶ-53» մակնիշի 04 UL 753 պետհամարանիշի բեռնատարը (կաթատար) ուղրաններից գլորվել է ձորը:

Գորիսից դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ քաղաքացիների ուժերով ավտոմեքենայից դուրս է բերվել ուղեւոր, Սյունիքի մարզի Բարաշեն համայնքի բնակիչ, 1987թ. ծնված Մեսրոպ Հակոբյանի դին, իսկ փրկարարների կողմից վարորդի՝ Սյունիքի մարզի Հարթաշեն համայնքի բնակիչ, 1986թ. ծնված Վարուժան Գալստյանի դիակը: Ուղեւորներ՝ մարզի Խնձորեսկ համայնքի բնակիչ, 1981թ. ծնված Վարդան Սայունցը եւ Հարթաշեն համայնքի բնակիչ, 1985թ. ծնված Գեւորգ Կարապետյանը, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղա-

փոխվել են Գորիս քաղաքի հիվանդանոց:

Բժիշկները տուժածների վիճակը գնահատում են բավարար:

Խափանվել էր գնացքների երթևեկությունը

Հուլիսի 29-ին «Վանաձոր երկաթգծի կայարան» ՓԲԸ-ից տեղեկություն է ստացվել, որ հորդառատ անձրևի հետևանքով ժամը 00.05-ի սահմաններում Սպիտակ-Գյումրի ավտոճանապարհի 2-րդ կմ-ում թունելից պոկված ժայռաբեկորներն ընկել են հարակից բարձրավտ հոսանքի սյան վրա եւ այն տապալել երկաթգծի վրա:

Դրա հետևանքով ժամը 02.35-ին Բաթումի-Երեւան գնացքի էլեկտրաքարշը բախվել է էլեկտրասյանը: Ջոհեր ու վիրավորներ չկան: Բաթումի-Երեւան գնացքի վագոնները այլ էլեկտրաքարշով տեղափոխվել են «Գյումրի» կայարան: Կատարված վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում ժամը 08.00-ի սահմաններում գնացքների երթևեկությունը վերականգնվել է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 31 դեպք

Հրդեհ մայրաքաղաքում

Հուլիսի 25-ին, ժամը 15.53-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Հ. Ներսիսյան թիվ 10 հասցեում գտնվող «Էլաս» ՓԲԸ-ի շենքում: Դեպքի վայր է

մեկնել երկու մարտական հաշվարկ եւ մեկ ավտոսանդուղք: Քիչ անց օգնության է մեկնել եւս երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 16.38-ին, մարվել՝ 17.24-ին:

Շենքի 5-րդ հարկում այրվել է մի քանի սենյակ գույքով՝ 500 քմ եւ տանիքը՝ 6 քմ մակերեսներով:

Հրդեհ մարզադահլիճում

Հուլիսի 25-ին, ժամը 22.08-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Վրացյան փողոցի թիվ 69 հասցեում գտնվող «Դինամ» մարզահամալիրում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 22.44-ին, մարվել՝ 22.48-ին:

Այրվել է մարզահամալիրի երկու դահլիճները միացնող միջանցքը եւ տանիքը՝ 100 քմ ընդհանուր մակերեսով, ինչպես նաեւ միջանցքում կուտակված մարզագորգերը:

Այրվել են վագոն-փնակներ

Հուլիսի 28-ին, ժամը 02.15-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Վերին Դվին գյուղի Տարատվ Տրասի փողոցում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 02.42-ին, մարվել՝ 03.15-ին: Ամբողջությամբ այրվել են Ժ. Բենիամինին պատկանող տան բակում գտնվող իրար միացված 2 վագոն-տնակները՝ 50 քմ մակերեսով:

Գոհար Բաղդասարյան

սեյսմիկ կաշտպանություն

Ս. թ. հուլիսի 23-ից 29-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կաշտպանող Յա-ստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցվել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել հինգ երկրաշարժ: Հուլիսի 25-ին Իրան-Թուրքիա սահմանային գոտում, իրանական Սալմաս քաղաքից 32 կմ դեպի հյուսիս-արեւմուտք, գրանցվել է 4-5 ուժգնությամբ երկրաշարժ: Հաջորդ օրը 5 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Թուրքիայի Կարս քաղաքից 27 կմ դեպի հարավ-արեւելք: Երրորդ իրադարձությունը տեղի է ունեցել հուլիսի 27-ին Վրաստանի տարածքում՝ Բարիսախո քաղաքից 26 կմ դե-

պի հարավ-արեւելք, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4 բալ: Նույն օրը 3 բալանոց սեյսմիկ ցնցումներ են գրանցվել Վրաստանի Դմանիսի քաղաքից 24 կմ դեպի հյուսիս-արեւելք եւ Արթրեջանի Գյանջա քաղաքից 56 կմ դեպի հյուսիս-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով տեղի է ունեցել մեկ ուժեղ երկրաշարժ: Այն գրանցվել է հուլիսի 25-ին Պապուա Նոր Գվինեայի Բուզենվիլ կղզու Արավա քաղաքից 75 կմ դեպի հարավ-արեւմուտք եւ ունեցել է 6.0 մագնիտուդ: Երկրաշարժի հետևանքով զոհեր եւ ավերածություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

Հտաաշտպանություն

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2869 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 410 մարդ: Եղել է մանկական 222 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 49 երեխա: Գրանցվել են 26 մահ եւ 16 դժբախտ պատահար:

Հուլիսի 24

Այգեստանի 1-ին նրբանցքից դեղորայքային թունավորում խտրորոշմամբ հիվանդանոց է տեղափոխվել 21-ամյա Ա. Խաչատրյանը:

Արցախի փողոցում տեղի ունեցած վթարի հետևանքով մահացել է 70-ամյա Ա. Քերոբյանը:

ՀԱԾ Բ1 թաղամասից սնկից թունավորումով հիվանդանոց է տեղափոխվել 21-ամյա Լ. Ալեքսանյանը:

Հուլիսի 25

Բուռնագյան 1-ին նրբանցքում էլեկտրահարվել եւ մահացել է 28-ամյա Խ. Խաչատրյանը: Նար-Դոսի 3-րդ նրբանցքում բարձրությունից ընկել է 70-ամյա Վ. Շահգեղյանը, որը գլխուղեղի վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

Հուլիսի 26

Երակների կտրած վերքով Տ. Մեծի փողոցից 1-ին համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել 40-ամյա Հ. Ջաբարյանը:

Նորքի 5-րդ զանգվածում տեղի ունեցած վթարի հետևանքով վնասվածքներ է ստացել ալկոհոլի ազդեցության տակ գտնվող 40-ամյա Ա. Աղայանը,

որը տեղափոխվել է հիվանդանոց:

Հուլիսի 27

Հալաբյան 26/11 հասցեում բարձրությունից ընկել եւ տեղում մահացել է 68-ամյա Ջ. Հովհաննիսյանը:

Ացետոնից թունավորումով հիվանդանոց է տեղափոխվել 1,5 տարեկան Լ. Խեսեմյանը:

Հուլիսի 28

Մալաթիա տոնավաճառի մոտ վրաերթի է ենթարկվել եւ տեղում մահացել մոտ 70 տարեկան մի կին:

Լենինգրադյան 23 հասցեում բարձրությունից ընկել եւ ողնաշարի սալքարոզով հիվանդանոց է տեղափոխվել 23-ամյա Ա. Նահապետյանը:

Դեղորայքից թունավորվել եւ հիվանդանոց է տեղափոխվել 24-ամյա Շ. Վահանյանը:

Հուլիսի 29

Հրազդան մարզադաշտի մոտ վրաերթի է ենթարկվել եւ բազմակի վնասվածքներով հիվանդանոց տեղափոխվել 43-ամյա Ռ. Մկրտչյանը:

Դեղորայքային թունավորումով հիվանդանոց է տեղափոխվել 45-ամյա Ս. Բաբայանը:

Հայաստանի Հանրապետության ԱԻ նախարարություն	
Հայաստանի փրկարար ծառայության	
Գ Գ Ն Ա Ժ Ա Մ Ա Յ Ի Ն Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն	
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Դ Ե Մ Ի Ա Ն	
Հայտարարում է 2009-2010 ուս. տարվա ընդունելություն հետևյալ մասնագիտություններով՝	
Բարձրագույն կրթական ծրագրերով՝	
<ul style="list-style-type: none"> • Զգնաժամային կառավարում (մասնագիտացումը՝ տնտեսագետ) • Հրդեհային պաշտպանություն (մասնագիտացումը՝ ճարտարագետ) • Քաղաքացիական պաշտպանություն (մասնագիտացումը՝ ճարտարագետ) • Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում (մասնագիտացումը՝ մանկավարժ) • Փրկարարական գործ (մասնագիտացումը՝ ճարտարագետ) • Տրանսպորտային եւ հրշեջ փրկարարական հատուկ տեխնիկայի ու սարքավորումների շահագործում եւ տեխնիկական սպասարկում (մասնագիտացումը՝ ճարտարագետ) 	
Ուսուցման ձևերը՝ <ul style="list-style-type: none"> • ցերեկային /առկա/ 4 տարի • հեռակա 5 տարի 	Ընդունելության քննությունները՝ <ul style="list-style-type: none"> • Մաթեմատիկա (բանավոր) • Հայոց լեզու (թեւադրություն) • Հայաստանի աշխարհագրություն (հարցազրույց)
Մագիստրատուրա	
<ul style="list-style-type: none"> • Զգնաժամային կառավարում (հեռակա) • Փրկարարական գործ (առկա) 	
Միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝	
<ul style="list-style-type: none"> • Հրդեհային պաշտպանություն (մասնագիտացումը՝ հրշեջ տեխնիկ) • Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում եւ նորոգում (մասնագիտացումը՝ տեխնիկ) • Մեմբրանային /կառավարում արտակարգ իրավիճակներում/ (մասնագիտացումը՝ մեմբրան) 	
Կրթության հիմքը՝	
Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 2 տարի)	
Հիմնական ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 3 տարի)	
Ընդունելությունը՝ հարցազրույցով (ուսուցումը՝ քաղաք Ստեփանավան):	
Միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցումը բարձր ցուցանիշներով ավարտածները կարող են ընդունվել բակալավրիատի 2-րդ կուրս:	
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը 10 ⁰⁰ - 17 ⁰⁰ : Տեղեկությունների համար զանգահարել՝ 61-47-60, 61-47-01, հասցե՝ ք. Երևան, Աճառյան 1:	

եղանակի տեսություն

Հուլիսի 23-ից 29-ը շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ՝ 3-25մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ +30...+35°C, Արարատյան դաշտում եւ Արցախում՝ +28...+33°C, Տավուշում՝ +25...+30°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում եւ Լեռնային շրջաններում՝ +20...+25°C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ +4...+9°C, Տավուշում՝ +7...+12°C, Արարատյան դաշտում եւ Սյունիքի նախալեռներում՝ +10...+15°C, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +17...+22°C:

Հուլիսի 31-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ, 31-ի երեկոյան ժամերին հյուսիսային շրջաններում, օգոստոսի 1-ին եւ 2-ին շրջանների մեծ մասում ժամանակ առ ժամանակ, 3-ի գիշերը եւ երեկոյան ժամերին հյուսիսային շրջաններում, 4-ին Սյունիքում սպասվում է անձրև եւ ամպրոպ, առանձին շրջաններում հնարավոր է կարկուտ: Քամին հարավարեւմտյան՝ 2-7մ/վրկ, ամպրոպի ժամանակ տեղ-տեղ ուժգնացում՝ 18-23մ/վրկ: Օդի ջերմաստիճանը հուլիսի 31-ին կբարձրանա 2-4 աստիճանով, օգոստոսի 1-ին նույնքանով կնվազի:



Սեւանա լիճ. ջրահեղձվածներ եւ փրկվածներ

Այս տարի Սեւանա լճում արդեն 5 մարդ է խեղդվել, 21 բախտավորների հասցրել են փրկել, տեղեկացնում է հատուկ ջրափրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ Սարգիս Հարությունյանը: Դեպքերի մեծ մասը տեղի է ունեցել փրկարարների կողմից չվերահսկվող տարածքներում:

Անցյալ տարիների ցուցանիշները հետեւյալն են.

2005 թ. – 6 դեպք, 9 զոհ, 2 փրկված,

2006 թ. – 7 դեպք, 6 զոհ, 1 փրկված,

2007 թ. – 2 դեպք, 2 զոհ, 2 փրկված,

2008 թ. – 8 դեպք, 4 զոհ, 4 փրկված:

Սեւանա շրջանում ջրափրկարարներից միակն է, որ վերահսկվում է փրկարարների կողմից, այն էլ ոչ ամբողջությամբ: ՀՀ ԱԻ Հայաստանի փրկարար ծառայության հատուկ ջրափրկարարական ջոկատը լճի ավազանի տարածքում 19 փրկարարական կետ ու կայան ունի: Ձուկատը ընդամենը 37 հոգուց է բաղկացած: Ջրափրկարարների պակասը լրացնելու համար Փրկարար ծառայությունում լուծումներ են որոնում: Հուլիսի 29-ին Սեւան այցելած ՀՀ ԱԻ նախարար Սիեր Շահգեղյանն ու Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, նախարարի առաջին տեղակալ Էդիկ Բարսեղյանը հավատացրեցին, որ խնդիրը շուտափույթ կերպով լուծվելու է:

Սեւան լճում են համալիր ծրագիր, որը լիարժեք անդրադարձնա ջրափրկարարության հետ կապված

բոլոր հիմնախնդիրներին, - ասաց Արտակարգ իրավիճակների նախարար Սիեր Շահգեղյանը:

Քննարկումների արդյունքում որոշել են, որ մեր արագ արձագանքման փրկարար ջոկատում ունեցած թափուր տեղերում կընդունեն լողալ իմացող մինչև 30 տարեկան անհավաք ջրամարդկանց, կուղարկեն ճգնաժամային կառավարման ակադեմիա՝ հասուկ դասընթացների, հետո նրանք կանցնեն գործնական ուսուցում ջրափրկարարների մոտ, ու եկող տարի մենք այդ կադրերին կօգտագործենք Սեւանի այն հատվածներում, որտեղ նրանց անհրաժեշտությունը կլինի, - ասաց Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը:

Սեւանը ափից ափ, հատակից վերեւ ճանաչող ջրափրկարարներն ասում են, որ լճում լողալը մի քանի վտանգ կարող է պարու-

նակել: Նախ՝ ջուրը սառն է նույնիսկ ամռանը, ինչի հետևանքով մկանային սպազմ կարող է տեղի ունենալ ու մարդիկ, դառնալով անշարժունակ, խեղդվում են: Երկրորդ՝ ջուրը քաղցր է, ինչի պատճառով մարդու քաշը ջրում ավելի մեծ է, քան աղի ջրի դեպքում: Դա նշանակում է, որ սուզվելն ավելի հեշտ է: Մյուս վտանգը մոտորանավակների, մեծ արագություն ունեցող սկուտերների տակ ընկնելն է:

Հաճախ հանգստացողները փորձառու վարորդներ չեն լինում ու վրաերթի են ենթարկում լճում լողացողներին, ինչ հետևանքով վերջինները վնասվածքներ են ստանում: Բացի դրանից, հնարավոր է նաև ալեբախտության ժամանակ ջուր կուլ սալ ու այրուհե սուզվել հասակը, - ասում է Հատուկ ջրափրկարարական ջոկատի փրկարար-ջրասուզակ Արմեն ճգմաչյանը:

Բոլոր դեպքերում, սակայն, ամենավտանգավորը փրկարարների կողմից չվերահսկվող տարածքներում լողալն է: Այդտեղ ափը ստուգված չէ, լողանալիս չկան, այնպես որ, լողացողը չի կարող կողմնորոշվել, թե որտեղից են սկսվում խոր կետերը: Փրկարարները խորհուրդ են տալիս՝ եթե ափում չկա փրկարարական կետ, մի լողացեք, մի վտանգեք ձեր կյանքը: Եթե տեսնում եք, որ մարդ է խեղդվում, մոտե-



ցեք նրան փրկելու միայն այն դեպքում, եթե շատ լավ լողալ գիտեք ու վստահ եք ձեր ուժերի վրա, այլապես մեկ զոհի փոխարեն երկուսը կլինի, քանի որ խեղդվողները միշտ ֆիզիկապես ուժեղանում են այդ պահին, պինդ բռնվում են փրկողից ու իրենց հետ քաշում ներքև: Ցանկացած դեպքում անպայման պետք է ահազանգել ու կանչել փրկարարներին, ովքեր կարող են արագ մասնագիտական օգնություն ցույց տալ տուժածին:

Ջրափրկարար Արմեն ճգմաչյանն ասում է, որ լողացողների ու հանգստացողների հետ խնդիրներ լինում են հիմնականում ամռանը, իսկ տարվա մյուս սեզոն-

ներին ձկնորսներն են փրկարարների կարիք ունենում:

Գնում, մոտոռանավակներով հասնում են լճի կենտրոն, օարժիչը փչանում է, ջուրը նավը փռում է ավելի հեռու: Նման դեպքերում մենք ենք գնում, գտնում ձկնորսին ու հետքերում ափ:

Հայաստանի փրկարար ծառայության ջրափրկարարական ջոկատը պատասխանատու չէ մասնավոր հանգստյան տների լողափերում լողացողների համար, որովհետև տեղի աղմուկն անստորադաս ինքն է պարտավոր հոգալ իր հանգստացողների անվտանգության մասին:

Անի Ստեփանյան

Շրջապ վերակենդանացնող օգնություն

Հանկարծակի մահը կարող է վրա հասնել այնպիսի գործունեների ազդեցության տակ, ինչպիսիք են էլեկտրական հոսանքի հարվածը, մեխանիկական տրավման, հրազենային վերքը, ջրահեղձումը եւ այլն: Սակայն արյան շրջանառության կամ շնչառության կանգը դեռ կենսաբանական մահ չի նշանակում, հետեւաբար՝ այդ վիճակը հետադարձելի է:

Կլինիկական մահը սահմանային վիճակ է կյանքի և կենսաբանական մահվան միջև: Դրա նշաններն են մարդու կենսագործունեության բոլոր արտաքին դրսևորումների դադարեցումը: Սակայն նույնիսկ ամենախոցելի հյուսվածքներում (ուղեղում) կյանքը դեռ կայծկլտուն է: Կլինիկական մահվան տևողությունը առավելագույնը 5 րոպե է: Շտապ վերակենդանացնող օգնությունը (ՇՎՕ) կյանքի վերականգնման, գրեթե մեռած մարդու վերակենդանացման մեթոդ է թթվածնով հագեցած արյան շրջանառության վերականգնման միջոցով:

ՇՎՕ-ն ցուցաբերում է այն մարդը, ով առաջինն է տեսել տուժածին: Սրտի անուղղակի մերսման եւ արիեստական շնչառություն տալու փոխարեն բժշկի հետևից վազելու փորձերը կարող են տուժածին կյանք արժեցնալ:

Ինչ էլ որ պատահի սրտի հետ, շատ կարևոր է, որ փրկողը որքան հնարավոր է արագ նկատի արյան վատ շրջանառության նախանշանները, Հենց այդ պահից է

Օգնի՛ր փրկածին

սկսվում կլինիկական մահվան անողորմ քրոնոմետրը:

Իրավիճակ

Կլինիկական մահ. սրտի եւ շնչառության կանգ

• Անոթազարկի կորուստ (վզի քներակի շոշափման ժամանակ)

• Գիտակցության կորուստ (կանչերին ու ցնցումներին արձագանք չկա)

• Ցնցումներ

• Բերի կայնացում (լույսին ռեակցիա չի տալիս, աչքերի «սառը» դաշլ՝ արցունքաբարտադրության դադարեցմամբ եւ ցանցաթաղանթի չորացմամբ)

• Շնչառության կորուստ կամ հատու շնչառություն

• Մաշկի գունատություն կամ կապտություն (քթաշրթունքային եռանկյունու շրջանում հողա-մոխրագույն գունավորում)

Ձեր գործողությունները

• Եթե մեռնակ եք, բարձրաձայն օգնություն կանչեք, խնդրեք որ Շտապօգնություն կանչեն կամ ուղարկեն բժշկի հետևից

• Տուժածին պառկացրեք չոր մակերեսի վրա (գետնին, հողին, մահճակալի եզրին եւ այլն): Ուշադրություն. փափուկ մակերեսին մերսումը ոչ միայն արդյունավետ չէ, այլև վտանգավոր է՝ լարող կարող է պայթել:

• Տուժածի կուրծքն ու որովայնն ազատեք սեղմող հագուստից. թուլացրեք փողկապը, գոտին, քանդեք օձիքը, կանանց մոտ՝ կրծկալը:

• Ստուգեք, արդյոք վզի ողերի

կամ գանգի (ծոծրակի հատվածում) կտրվածք չկա:

• Կանգնեք տուժածի կողքին

• Ստուգեք շնչառական ուղիների անցանելիությունը

- մի ձեռքն անցկացրեք վզի տակ, մյուսը դրեք տուժածի ճակատին եւ, առանց մեծ ուժ գործադրելու, գլուխը ետ տարեք (այդ ժամանակ, սովորաբար, բերանը բացվում է)

- ստուգեք բերանի խոռոչը եւ հեռացրեք կտրված ատամները, պրոտեզները, լորձը, ավազը եւ այլն:

• Արիեստական շնչառություն (ԱՇ) արեք բերան-բերան մեթոդով. սեղմելով փակեք քթանցքերը՝ ափով ֆիքսելով ճակատը

- խորը ներշնչում արեք, բերանը սեղմեք տուժածի բերանին՝ ապահովելով լրիվ հերմետիկություն, օդը ներփչեք նրա բերանի մեջ:


- ներշնչման ժամանակ հետևեք տուժածի կրծքի բարձրանալուն:

- ազատեք տուժածի բերանը եւ հետևեք պասիվ արտաշնչման արդյունքում կրծքավանդակի իջնելուն:

- ԱՇ իրականացրեք 3-5 անգամ՝ չափասելով լրիվ պասիվ արտաշնչմանը

- ԱՇ հաճախականությունը (թրթերի փչումը)՝ րոպեում 10-15 անգամ (5 վայրկյանում 1 անգամ):

- ԱՇ զուգորդեք սրտի անուղղակի մերսման հետ:



• Սրտի անուղղակի մերսման համար

- ձեռքը դրեք կրծքավանդակի ամենամեղմունքի մեկ երրորդի վրա՝ այնպես, որ ձեռքի առանցքը համընկնի կրծքավանդակի առանցքին, ձեռքի վրա դրեք մյուս ձեռքը, մատներն ուղղեք:

- մեծահասակների մոտ կրծքավանդակի սեղմումն իրականացվում է դեպի ողնաշար ցնցումաձեւ՝ բավական մեծ ուժով (3-4 սմ), ձգված ձեռքերով՝ առանց արմունկները ծալելու՝ ողջ մարմնով առաջ թքված:

- սեղմման քանակը՝ րեպում 60-ից ոչ պակաս

- սեղմման ուժը համապատասխանեցրեք կրծքավանդակի առաձգականության հետ՝ այլապես կարող եք կոտրել տուժածի ողերը, վնասել ներքին օրգանները:

• Եթե վերակենդանացումը մեկ փրկարար է իրականացնում, արիեստական շնչառության եւ մերսման հարաբերակցությունը 2:15 է: Եթե աշխատում է երկու փրկարար, ապա այդ հարաբերակցությունը 1:5 է:

• Վերակենդանացման աշխատանքներն իրականացվում են մշտական հսկողության ներքո: Պետք է հետեւել անոթազարկին. յուրաքանչյուր մերսող սեղմումից հետո անոթազարկը պետք է հայտնվի: Հետեւեք բերանին. ճիշտ գործողությունների դեպքում դրանք պետք է նեղանան:

• Շարունակեք վերակենդանացումը՝ մինչև անոթազարկի եւ շնչառության կայուն վերականգնումը: Վերակենդանացման միջոցառումների նպատակն է սրտի աշխատանքի, լրիվ ինքնուրույն շնչառության եւ ուղեղի աշխատանքի վերականգնումը:

• Քներակի անոթազարկի բացակայության (սեղմումներից հետո) եւ բերանի լայնացման դեպքում վերակենդանացումը պետք է տեւի 30 րոպեից ոչ պակաս: Համեմատաբար տաք ջրում խեղդվողին օգնություն ցույց տվեք մոտ 30 րոպե, իսկ սառը ջրում տուժածին՝ երկու ժամ եւ ավելի:

• Շարունակեք պայքարել մարդու կյանքի համար մինչև բժիշկների ժամանելը:



Սեւ մահը. համաճարակներ

Որոշ մասնագետների կարծիքով մարդկության պատմությունը համաճարակների պատմություն է: Կարծիք կա, որ համաճարակները նույնիսկ երբեմն փոխել են պատմության ընթացքը, ազդել կրոնական նախապատվությունների և տնտեսական զարգացման վրա: 21-րդ դարում իր դաժանությամբ հայտնի է ՉԻԱՀ-ը, ամեն տարի թոքախտը խլում է 2-3 միլիոն մարդու կյանք, մալարիայով վարակվում է մոտ կես միլիարդ մարդ: Մահաբեր են նաև այն հիվանդությունները, որոնք առաջին հայացքից կարծես թե վտանգավոր չեն: Դրանց թվին է պատկանում, օրինակ, գրիպը, որի վիրուսները պարբերաբար ձեւափոխվում են ավելի վտանգավոր տեսակների: Արդեն այսօր աշխարհը կանգնած է հերթական համաճարակի՝ խոզի գրիպի սպառնալիքի առջև:

Քաոսն Աթենքում

Մ.թ.ա. 5-րդ դարում հին աշխարհի երկու հզորագույն պետությունները՝ Աթենքը և Սպարտան անընդհատ պատերազմում էին: Դեռևս կանաչ պատերազմի ժամանակ, երբ սպարտացիները գրավեցին գրեթե ողջ Աթենքը, աթենական ստրատեգ Պերիկլեսն իր զորքերով ամրացավ առանց այդ էլ մարդկանցով լի քաղաքում: Դեպքերի հետագա զարգացման մասին պատմել է հույն պատմաբաններից մեկը: Ըստ նրա՝ շրջապատված քաղաքում բռնկվեց ժանտախտի համաճարակ, որը տևեց 430-ից 428 թվականը: Քաղաքում քաոս էր տիրում: Փողոցները ծածկվեցին դիակներով: Պերիկլեսի զորքը կորցրեց զինվորների մեծ մասին և այլևս չկարողացավ հետ մղել հակառակորդին: Այդպիսով, համաճարակը հանգեցրեց Աթենքի գրավմանը:

Դիակներով լի աշտարակներ

542 թվականին Հուստինիանոս կայսեր կառավարման 15-րդ տարում, Բյուզանդիայում բռնկվեց ժանտախտի համաճարակ, որը մոլեգնեց շուրջ չորս ամիս: Այդ ընթացքում վարակից մահացավ 300 հազար մարդ՝ Բյուզանդիայի բնակչության կեսը: Ամեն օր ժանտախտը խլում էր տասը հազար մարդկային կյանք: Կայսրը նույնպես վարակվեց, սակայն դա զաղտնի էր պահվում ժողովրդից: Չնայած երկրում տարածված սարսափին՝ բյուզանդացիները կարողացան միավորվել «սեւ դժբախտության» դեմ պայքարում: Ի հայտ եկան կամավորներ, որոնք պատրաստ էին հոգ տանել հիվանդների մասին կամ փողոցներից և տներից դուրս հանել դիակները: Սակայն մարդիկ մահանում էին հարյուրներով և փորված փոսերն արագորեն լցվում էին: Կամավորները ստիպված էին մահացածների դիակները հավաքել քաղաքների աշտարակներում: Այդպիսով, մի քանի ամսվա ընթացքում Բյուզանդիայի բոլոր աշտարակները լցվեցին դիակներով:

Մահն անցավ Եվրոպայով

Մարդկության ամբողջ պատմության ընթացքում ոչ մի համաճարակ այնքան մարդկային կյանքեր չի խլել, որքան ժանտախտը, որը նաև սեւ մահ են անվանում: Այսօրվա Դրոզդատանի տարած-

ված գտնվող Իսիկ Կուլ լճի ափերի մոտ հայտնաբերված քրիստոնեական տապանաքարերի գրությունները վկայում են, որ դեռևս 1338 թվականին Ասիայում մոլեգնում էր այս սարսափազդու հիվանդությունը: Մոտ 13 տարվա ընթացքում համաճարակն անցել է գրեթե բոլոր երկրների տարածքով: Տասը վարակվածներից ողջ էր մնում միայն մեկը: Ժանտախտից մահացածների ընդհանուր թիվը ենթադրաբար հասավ 75 միլիոնի:

1347-ին վարակը Դրիմից անցավ Սիցիլիա, իսկ արդեն այնտեղից նավերով բերվեց Գերմանիա, Ֆրանսիա և Սկանդինավիա: Բժիշկներն ուղղակի անգոր էին: Մարդիկ մահանում էին իրենց տներում և նույնիսկ փողոցներում: Վեց ամսվա ընթացքում ժանտախտից մահացավ Ֆլորենցիայի բնակչության կեսը: Գերմանիայում ճանապարհներին թափառում էին անտեր մնացած կենդանիներ, դաշտերը մնացել էին անմշակ, պանդուխտները դատարկվել էին: Շատ եկեղեցիներ փակվել էին, քանի որ հոգեվարակների մեծ մասը գոհ էր գնացել սարսափելի հիվանդությանը: Համաճարակը մի քանի մարդ էր մահանում, սակայն դա անհանգստություն չէր առաջացնում: Դրան վաղուց էին սովորել: Սակայն 1665 թվականի ապրիլին հիվանդների թիվը կտրուկ աճեց: Գիշերները փողոցներում սայլերի դողողը էր լսվում, ուղեցողը կոչ էր անում լոնդոնցիներին դուրս հանել մահացածներին: Ավելի ու ավելի հաճախ տների դռներին կարելի էր կարանտին նշանակող կարմիր խաչ տեսնել: Արդեն մայիսի սկզբին թագավորական դատարանը հրամայեց Լոնդոնում և մերձակա բնակավայրերում ցանկապատել այն տները, որտեղ ժանտախտով հիվանդներ կան: Լոնդոնի հարուստ բնակիչները լքում էին քաղաքը. այնտեղ մնացել էին միայն աղքատներն ու մեռածները: Համաճարակի գագաթնակետը սեպտեմբերի երկրորդ շաբաթն էր. յոթ օրվա ընթացքում մահացավ 7165 մարդ: Ճանապարհները փակված էին, տների վրա կարմիր խաչեր էին երեւում:

Սեւ մահը Լոնդոնում

17-րդ դարի կեսերին Լոնդոնը 500 հազար բնակչությամբ ծաղկուն քաղաք էր: Ամեն տարի ժանտախտից մի քանի մարդ էր մահանում, սակայն դա անհանգստություն չէր առաջացնում: Դրան վաղուց էին սովորել: Սակայն 1665 թվականի ապրիլին հիվանդների թիվը կտրուկ աճեց: Գիշերները փողոցներում սայլերի դողողը էր լսվում, ուղեցողը կոչ էր անում լոնդոնցիներին դուրս հանել մահացածներին: Ավելի ու ավելի հաճախ տների դռներին կարելի էր կարանտին նշանակող կարմիր խաչ տեսնել: Արդեն մայիսի սկզբին թագավորական դատարանը հրամայեց Լոնդոնում և մերձակա բնակավայրերում ցանկապատել այն տները, որտեղ ժանտախտով հիվանդներ կան: Լոնդոնի հարուստ բնակիչները լքում էին քաղաքը. այնտեղ մնացել էին միայն աղքատներն ու մեռածները: Համաճարակի գագաթնակետը սեպտեմբերի երկրորդ շաբաթն էր. յոթ օրվա ընթացքում մահացավ 7165 մարդ: Ճանապարհները փակված էին, տների վրա կարմիր խաչեր էին երեւում:

ժանտախտի գոհերի թիվը հասավ 100 հազարի:

Սեւ տարի անց ուժեղ հրդեհը ոչնչացրեց Լոնդոնը, այդ թվում առնետներով լի նեղիկ կեղտոտ փողոցները:

Ամերիկյան վախի մեջ

1900 թվականը չինական օրացույցով առնետի տարի էր: Մարտի 6-ին ժանտախտը «ոտք դրեց» Ամերիկա: Սան Ֆրանցիսկոյի չինական թաղամասում հայտնաբերվեց այտուցային ժանտախտից մահացածի դիակ: Հավանաբար, վարակն իրենց հետ բերել էին ճապոնական բեռնատար նավով ԱՄՆ եկած անօրինական ներգաղթողները:

Ի սկզբանե համարվում էր, որ ժանտախտով կարող են վարակվել միայն ասիացիները: Երբ քաղաքային իշխանությունները չինական թաղամասում կարանտին հայտարարեցին, Սան Ֆրանցիսկոյի գործարար մարդիկ փորձեցին դիմադրել այդ որոշմանը: Նրանք համոզված էին, որ ժանտախտի մասին բոլոր գրույցները կարող են միայն վնաս հասցնել իրենց բիզնեսին: Սակայն գոհերի թիվը շարունակում էր աճել: Հարեւան մահացածներում արգելվեց ապրանքներ ներմուծել Կալիֆոռնիայից, իսկ այդ նահանգից եկածները մանրակրկիտ ստուգումների էին ենթարկվում: Չինական թաղամասում վարակագրեցիկները և սնդիկի լուծույթով մշակվեց ավելի քան 1200 տուն: Չնայած դրան համաճարակի բռնկումները կրկնվեցին մինչև 1904 թվականը: Այդ ընթացքում 127 վարակվածից ողջ մնացին միայն հինգը:

Ժանտախտի այս երրորդ համաճարակը վերջինն էր. տարբեր երկրների օդանավամետրի համատեղ ջանքերով նախ 1894 թվականին հայտնաբերվեց ժանտախտը հարուցող մանրէն, իսկ որոշ ժամանակ անց մշակվեցին նաև հիվանդության դեմ պայքարի միջոցներ:

Ացտեկների քաղաքակրթության անհայտացումը

Պատմությունից հայտնի է, որ 16-րդ դարի սկզբին Էրնան Կորտեսը, մի քանի հարյուր զինված հեծյալների և մոտ տասը թնդանոթի օգնությամբ, ընդամենը երեք տարվա ընթացքում կարողացավ գրավել ացտեկների կայսրությունը: Կորտեսի լավագույն դաշնակիցը ծաղկախոս էր: Սկզբում ացտեկները գրկաբաց ընդունեցին Կորտեսին՝ որպես Կվետցալկոատլ վերադարձած աստծո, սակայն շատ շուտով իսպանացու դեմ դուրս եկավ կայսրության ամբողջ բնակչությունը: Ացտեկների կողմից վտարված Կորտեսը պատսպարվեց անտառներում կորցնելով իր զորքի կեսը: Ացտեկներին թվում էր, թե իսպանացիները մեկընդմիջում ջախջախված են: Սակայն նույնիսկ Կորտեսը չէր ենթադրում, որ ացտեկներին որպես «նվեր» մահացու հիվանդություն է թողել: Հավանաբար, նվաճողի



մահացած զինվորների մեջ կային ծաղկախոսով վարակվածներ: Համաճարակն ընդգրկեց ամբողջ Մեքսիկան: Իսպանացիներն ավելի հազվադեպ էին վարակվում, քանի որ նրանցից շատերը փոքր հասակում արդեն հիվանդացել էին ծաղկախոսով: Կորտեսն առանց հապաղելու օգտագործեց այդ առավելությունը: Նա անցավ հարձակման գրեթե չհանդիպելով դիմադրության: Ացտեկների կայսրությունը դատապարտված էր:

Ոչ ոք հստակ չգիտե, թե որքան մարդկային կյանք էր խլեց այդ համաճարակը: Գիտնականները միայն ենթադրում են, որ գոհերի թիվը կարող էր տատանվել 2-15 միլիոն մարդ:

Անգլիական քրտինք

Ոչ պակաս հանելուկային հիվանդություն է եղել այսպես կոչված «անգլիական քրտինքը» կամ «անգլիական քրտնքային ջերմախտը»: 15-րդ և 16-րդ դարերում Եվրոպայում մոլեգնած բավական տարօրինակ այդ համաճարակը չէր հանդիպել ոչ մինչ այդ, ոչ էլ հիվանդությունից հետո: Համաճարակը խլեց բազմաթիվ մարդկային կյանքեր, իսկ հետո, ինչպես հանկարծակի ծագել էր, այնպես էլ անհետացել:

Առաջին անգամ այդ հիվանդությունը հայտնվել է 1486 թվականի օգոստոսի 22-ին Անգլիայում և մի քանի օրվա ընթացքում գրեթե ամբողջությամբ տարածվել է ամբողջ երկրով մեկ: Վարակն ուներ բավական բնորոշ նշաններ, որոնք այդ ժամանակվա բժիշկներին ծանոթ չէին, և աչքի էր ընկնում արագ տարածումով: Առողջ մարդկանց մոտ հանկարծակի բարձրանում էր ջերմությունը, դեմքը կարմրում էր, երբեմն նկատվում էին ջղաճգություններ, գլխացավ, հոգացավ, սրտի արագ բաբախում, տհաճ համ և բերանից գալիս էր անտանելի հոտ: Իսկ հետո ամբողջ մարմինը պատվում էր գարշահոտ առատ քրտինքով: «Անգլիական քրտինքի» ևս մեկ առանձնահատուկ նշան էր եղել է քնկոտությունը՝ հիվանդը քնել և այլևս չի արթնացել: Ամբողջ հիվանդությունը տևում էր մի քանի ժամից մինչև մի քանի օր: Եվ ինչպես պատմում են այդ ժամանակի բժիշկները, երբեմն մահը լինում էր ակնթարթային. նախա-

ճաշին մարդիկ առողջ էին, իսկ ճաշին արդեն մեռած: «Քրտնքային ջերմախտից» մեռնում էին հիվանդների մինչև 95 և ավելի՝ 100 տոկոսը: Ի դեպ, հիվանդանում էին միջին տարիքի մարդիկ, երեխաները և տարեցները չէին վարակվում: Փոխանցվող վարակը չէր տալիս իմունիտետ, շատ քիչ առողջացածները կարող էին երկրորդ, երրորդ անգամ էլ հիվանդանալ: Առաջին համաճարակը տևեց հինգ շաբաթ՝ Անգլիայի քաղաքներում առաջացնելով հսկայական ամայացում:

«Քրտնքային ջերմախտի» հաջորդ համաճարակը բռնկվեց 1507 թվականին, բայց ունեցավ համեմատաբար սահմանափակ ընդգրկում՝ տարածվելով միայն Լոնդոնում: Երրորդը սկսվեց 1518 թվականի հուլիսին և ավելի արագ տարածվեց, քան առաջին երկուսը: Այս անգամ հիվանդությունն ընդգրկեց ամբողջ Բրիտանիան, բացի Շոտլանդիայից և Իռլանդիայից, որից հետո թափանցեց Եվրոպա, որտեղ հասավ մինչև Ֆրանսիայի Կալիքալը՝ ճանապարհին հսկայական զանգվածների: Երրորդ համաճարակի բերած ամայացումն ու դաժանությունը բավական մեծ էր առաջինից: Առանց որևէ նախաձեռնի հիվանդները երկու կամ երեք ժամից մեռնում էին: Մի շաբթ քաղաքներում մեռնում էր բնակչության երրորդ մասը, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ կեսը: Այդ ժամանակ Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններում տարօրինակ հիվանդությունից մեռան շատ ուսանողներ և անվանի պրոֆեսորներ:

1529 թվականին Լոնդոնում սկսված չորրորդ համաճարակն իր նախորդի ընդգրկումն ունեցավ, հետո հայտնվեց Գերմանիայում, Պրուսիայում, Լատվիայում, Լեհաստանում: Հիվանդությունը չորսանցեց նաև Ռուսաստանը: Նովգորոդում և դրա շրջակայքում մահացավ մոտ 300 հազար մարդ:

16-րդ դարի վերջին «անգլիական քրտնքային ջերմախտը» հանկարծակի անհետացավ և այդ ժամանակվանից ի վեր երբեք ու ոչ մի տեղ չհայտնվեց: Այնպես որ, ներկայումս այս անսովոր և հանելուկային հիվանդության ծագման մասին միայն կարելի է ենթադրություններ անել:



Առաջին փրկարարական ջոկատը 20 փարեկան է

Հուլիսի 27-ին «Սպիտակ» փրկարարական ջոկատի անդամները տուժածներին օգնելու իրենց գիտելիքներն ու հմտություններն էին ցուցադրում Խնկո Ապր գրադարանի շենքի մոտ: Միջոցառման առիթը «Սպիտակ» փրկարարական ջոկատի 20-ամյակն էր: Օրը նշանակալից էր ոչ միայն հիմնադրման տարելիցով, այլև՝ Գերմանական Կարմիր խաչի «Բերզվախտ» լեռնափրկարարական կազմակերպության հետ սպիտակցիների բարեկամության 20-ամյակով: «20 տարի միասին»՝ գրված էր նրանց մարզաշապիկների վրա:

Մեր համաձայն միջոցառումները, լեռնագնացային արժանեքներն ու զարգացումները ավելի են սերտացնում մեր ընկերությունը: Կարող են փաստել՝ մենք շատ լավ թիմ ենք ստեղծել,- ասում է «Բերզվախտ» լեռնափրկարարական կազմակերպության փոխնախագահ Ուլֆ Բլեսինգը: Միջոցառման ժամանակ «Սպիտակ» ջոկատի փրկարարները ոչ միայն տանիքից ու լուսամուտներից տուժածներ իջեցրին, այլև ցուցադրեցին առաջին օգնության իրենց հմտությունները, փրկարարական գործիքներն ու տեխնիկան, հավաքված հաղիսատեսին բացատրեցին, թե ինչն ինչի համար է ու ինչպես է արվում:



Սպիտակ փրկարարական ջոկատը հիմնադրվել է Սպիտակի երկրաշարժից հետո՝ գերմանացի Գերարդ Մայերի կողմից: Առաջին անդամները Երեւանի ալպինիստական ակումբից էին, ովքեր 88-ին շտապել էին աղետի գոտի՝ տուժածներին օգնություն ցույց տալու համար:

տարվա կամավոր Եվգենիա Պատուրյանը, ով նաև 20-ամյակին նվիրված միջոցառումների համակարգողն է:

«Սպիտակ» փրկարարական ջոկատի փրկարարները կամավորներ են: Այսօր ջոկատում կան 37 ակտիվիստներ, ովքեր պարբերաբար անցկացնում են մարզաձևեր ու արշավներ, մագլցում են լեռներ, մասնակցում են նաև փրկարարական աշխատանքների:

Մասնակցում են հիմնականում փրկարարական աշխատանքների լեռներում: Մեծ աղետների այսօր չեն արձագանքում, քանի որ կան արդեն ղեկավարող համադասարակ կառույցներ,- ասում է Եվգենիա Պատուրյանը:

Միջոցառումը 20-ամյակի նշանակալից փուլն էր: Առաջինը եղել էր, ոչ ավել՝ ոչ պակաս, դեպի Կազբեկ լեռան գագաթը կազմակերպված արշավ: Բարձրացել էին միասին՝ հայերն ու գերմանացիները: Նման միջոցառումներ բարեկամ-գործընկերները հաճախ են անցկացրել:

Թեև 90-ականներին Սպիտակ ջոկատը խոշոր աղետների ժամանակ փրկարարական աշխատանքներ է իրականացրել Իրանում, Տաջիկստանում եւ մի քանի այլ երկրներում, այսօր արտերկրում աղետ տեղի ունենալու դեպքում իրենց օգնության կանչելը սպիտակցիները քիչ հավանական են համարում: Սակայն ասում են, որ պատրաստ են մեկնելու եւ օգնելու, քանի որ իրենց պատրաստվածության մակարդակը համարվում է եվրոպական. այդ գնահատականը գերմանացի գործընկերներն են տվել:



Աճի Ստեփանյան

Երկնային հրից լուսավորչի կանթերի վառվելու պատմությունը բնավ էլ առասպել չի թվա, եթե այն բացատրենք սովորական կայծակի միջոցով:

Որոշ աթեիստներ հենց այդպես էլ վարվում են: Նման վարկածին դեմ չեն նաև որոշ թեիստներ, այն վերապահումով միայն, որ հրաշագործ կայծակը Բարձրալի ուղարկած նշանն է:

Կայծակի հարվածից մարդու վրա առաջանում է կապույտ գույնի ծառի նման մի պատկեր: Եվ ինչքան էլ դա բացատրվի ենթամաշկային անոթների կաթվածով, միևնույն է, շատ գայթակղիչ է սա՛՛ էլ դիտել որպես ի վերուստ հղում:

Մինչ կայծակին գիտական բացատրություն գտնելն, իհարկե, դժվար էր այն չվերագրել գերբնական ուժերին: Եվ ինչպես մյուս աղետ-արհավիրքները՝ կայծակն էլ է ընկալվել որպես Աստծո պատիժ կամ, առնվազն, նախագուշացում, ու միայն չնչին բացառություններով, ինչպես Լուսավորչի կանթերի դեպքում, որպես երկնային պարգև:

Իսկ մենք փորձենք կայծակին մոտենալ գիտական տեսանկյունից: Կայծակը էլեկտրական լիցքերի պարպումն է, որը տեղի է ունենում տարանշան լիցքով ամպերի, կամ ամպի եւ երկրի մակերեսային միջև: Բնության մեջ առանձնանում է կայծակի երեք տիպ՝ գծային, ոչ գծային եւ գնդաձև: Ամենատարածվածը գծայինն



Կայծակ

է, որն ուղղված է լինում ամպերից դեպի երկիր կամ հակառակը: Ի դեպ, ավելի վտանգավոր են երկրի մակերեսից դեպի երկինք ուղղված կայծակները, որոնք դիտվում են լեռնագագաթներին:

Խիստ վտանգավոր է հատկապես գնդաձև կայծակը: Այն իրենից ներկայացնում է գնդի կամ տանձի նման մի գանգված, որի տրամագիծը կարող է հասնել մի քանի մետրի: Հանդիպում է լեռնային բարձրադիր վայրերում՝ գծային կայծակից հետո: Ի տարբերություն մյուսների, որ տեղում են կես վայրկյանից էլ կարճ, գնդաձև կայծակները երկար կյանք ունեն՝ մեկ վայրկյանից մինչև մի քանի րոպե, բացի այս՝ սրանք տարածության մեջ շարժվում են բոլոր ուղղություններով:

Կայծակի վտանգավորությունը հասկանալու համար բերենք միայն մեկ բնութագրող մեծություն: Չափումները ցույց են տվել, որ կայծակի հոսանքի ուժը տատանվում է 20 հազարից մինչև 200 հազար ամպերի միջև, իսկ լարվածությունը բարձր է 50 միլիոն վոլտից: Աշխարհում մեկ վայրկյանում տեղի է ունենում կայծակի 100 պարպում: Մեկ ամպրոպի ժամանակ կարող է տեղի ունենալ 600-ից ավելի կայծակ:

Հայաստանում ամպրոպային երեւույթները թափ են առնում ապրիլին, երբ ամպրոպային օրերի թիվը կազմում է 3-6 օր: Մայիս-հունիս ամիսներին այն դառնում է 7-18, հետո՝ սկսում է նվազել, եւ հոկտեմբերին հասնում 1-3 օրվա:

Կայծակները հիմնական

պատճառն են անտառային հրդեհների, նաև վտանգավոր են մարդկանց համար՝ հատկապես լեռնային եւ ջրային տարածքներում:

Աշխարհում տարեկան կայծակին զոհ է գնում 20 մարդ:

Ինչպես վարվել կայծակի ժամանակ

Եթե գտնվում եք բաց տարածքում՝ հարկավոր է շտապ գտնել հողակցված ապաստան: Այդպիսին կարող է ծառայել քարանձավը, սակայն չի կարելի կանգնել մուտքի մոտ: Անտառը նույնպես ապահով ծածկ է, սակայն չի օգնում մենավոր ծառը: Իսկ եթե պատասպարվելու ոչ մի հնար չկա՝ հարկավոր է նստել տեղանքի ամենացածր կետում: Հարկավոր է հեռու մնալ գետերից ու լճերից, չի կարելի լողալ կամ մնալ նավակում: Չի կարելի պատասպարվել խոտի դեպի մեջ:

Տանը եղած ժամանակ հարկավոր է փակել դռներն ու լուսամուտները, անջատել էլեկտրասարքավորումները, չօգտվել ջրի ձորակներից:


Կայծակներից պաշտպանվելու լավագույն միջոցը շանթարգելն է, որ տեղադրվում է շենքերի տանիքներից բարձր: Այն իր վրա է վերցնում կայծակի հիմնական հարվածը: Շանթարգելները հողակցված են լինում եւ ունենում են 10 օհմ սեփական դիմադրություն: Անտենաները նույնպես հարկավոր է անպայման հողակցել:

Ուսումնասիրությունները

ցույց են տվել, որ կայծակնահար մարդու մեջ տեղի է ունենում մկանների կծկում, մասնավորապես՝ ստոծանու եւ սրտամկանի, ինչն էլ հարուցում է շնչառության եւ սրտամկանի կանգ: Ուղեղի վրա էլեկտրական հոսանքի ազդեցությունն արտահայտվում է գիտակցության կորստով:

Կայծակի հպման տեղում մարմնի վրա առաջանում է երրորդ կարգի այրվածք: Էլեկտրական հոսանքի ազդեցությունը ուժեղանում է թաց կոշիկների եւ շորերի պատճառով, որոնք էլեկտրականության բարձր հաղորդիչ են: Կայծակի հարվածից մարդը հաճախ հայտնվում է կլիմիկական մահվան վիճակում, ուստի անհրաժեշտ է անհապաղ սկսել տուժածի վերականգնացումը: Եթե արհեստական շնչառությունը ուշքի է բերում նրան, հարկավոր է խնայել մեծ քանակությամբ հեղուկ (ալկոհոլը եւ սուրճն արգելվում է): Այրվածքները պետք է մշակել ինչպես սովորական ջերմային այրվածքների դեպքում: Շանթահարին անհրաժեշտ է մերկացնել, գլուխը ողողել սառը ջրով, մարմինը փաթաթել թաց եւ սառը սավանով, անհրաժեշտության դեպքում կիրառել արհեստական շնչառություն, հնարավորության դեպքում՝ արագ բժիշկ կանչել:

Ինչ վերաբերում է տուժածին հողով ծածկելու հին հեքիմական մեթոդին, այն անհիմաստ է եւ վնասակար՝ ժամանակի ավելորդ կորստի պատճառով:



911 թե՛ 9-11

Հյուսիսամերիկյան արագ արձագանքման ծառայության եռանիշ հեռախոսահամարը հայտնի է համարյա ամբողջ աշխարհին: Այն պարբերաբար հնչում է տարբեր ֆիլմերում, հե-

արձագանքելու համար միասնական 911 հեռախոսահամարն առաջին անգամ կիրառվել է 1968 թ. փետրվարին, ԱՄՆ-ի Ալաբամա նահանգում: Այդ համարը հավաքելիս բաժանորդն ավտո-



ռուտատեսային հաղորդումներում, նշվում գրքերում, թերթերում, ինտերնետում եւ այլուր: Կարելի է ասել, որ այս հեռախոսահամարը դարձել է Միացյալ Նահանգների խորհրդանիշերից մեկը, ինչպես օրինակ՝ Ազատության արձանը:

Հասփնգսի քոլեջի ուսանողական ավանդում ամենուր տեղադրված սյուների վրա կան հատուկ սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր է ահագանգել փրկարար ծառայություն, նույնիսկ եթե մարդը, խուճապի մատնվելով, մոռացել է այդ հեռախոսահամարը կամ նրա բջջային հեռախոսն անբողջությամբ լիցքաթափվել է:

Իմիջիայլոց, արտակարգ իրավիճակում մարդու ապրած սթրեսի պատճառով է, որ ամերիկյան փրկարար ծառայության հեռախոսահամարը հնչում է 9-1-1, այլ ոչ թե՛ 9-11: Դեպքեր են եղել, երբ խուճապահար մարդիկ չեն կարողացել հեռախոսի կոճակների վրա գտնել 11 թիվը:

Օգնության բոլոր խնդրանքներին

մատ կերպով միանում էր ոստիկանության տեղի բաժանմունքին: Այն շատ հեշտ էր հիշել, բացի այդ՝ այս թվերը նմանատիպ այլ ծառայությունների տրամաբանական շարունակությունն էին (211 – միջբաղաբային գանգերի համար, 411 – տեղեկատու, 611 – վերանորոգման ծառայություն եւ այլն):

1970-ական թվականների կեսերին այս հեռախոսահամարը ներդրվում է նաեւ Չիկագոյում, բայց այս անգամ արդեն ոստիկանության եւ հրշեջ ծառայության միասնական արձագանքման համար: Արդեն հնարավոր էր նաեւ հեռախոսակալայանի միջոցով որոշել ահագանգողի գտնվելու վայրը:

Սեպտեմբերի 11-ը (9-րդ ամսվա 11-րդ օրը) մինչեւ 2001 թվականը նշվում էր որպես արագ արձագանքման ծառայությունների հեռախոսի օր, սակայն բոլորին հայտնի Նյույորքյան ահաբեկչական գործողություններից հետո այդ ավանդույթը վերացել է:

Բիլ Գեյթսը փորձում է ասնձել փոթորիկները

«Մայքրոսոֆթ» ընկերության հիմնադիրը եւ աշխարհի ամենահարուստ մարդը՝ Բիլ Գեյթսը, միացել է փոթորիկների դեմ պայքարին, հայտնում է «Սանդեյ թայմսը»: ԱՄՆ-ի ափերի երկայնքով շարված լաստանավերի մի ողջ «նավատորմի» միջոցով նա ծրագրում է սառեցնել արեւադարձային ջրերը եւ այդ կերպ նվազեցնել այդ եղանակային երեւոյթների ավերիչ ուժը:

Ծրագրվում է, որ լաստանավերը հագեցված կլինեն հզոր պոմպերով, որոնք, հատակի սառը ջուրը վեր քաշելով, կնպաստեն օվկիանոսի ջերմաստիճանի իջեցմանը: Քանի որ փոթորիկը ուժ է հավաքում հատկապես ջրի մակերեսից բարձրացող տաք օդի հոսանքներից, ջրի սառեցման արդյունքում դրանց ուժգնությունը կնվազի:

Փորձագետների գնահատմամբ, արդյունքի հասնելու համար օվկիանոսը պետք է սառեցնել մինչեւ 4.5 աստիճան ըստ Ցելսիուսի: Նրանք ընդունում են, որ տեսականորեն նկարագրված մեթոդը կարող է աշխատել, բայց



կասկածում են, որ Գեյթսը կկարողանա այն կյանքի կոչել: Որոշ մտավախություններ կան նաեւ մեթոդի կիրառման հետեւանքների վերաբերյալ. հայտնի է, թե այն ինչ ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա եւ արդյոք չի՞ ուղղի այդ փոթորիկները դեպի Կուբա:

Ծաղիկների բույրերը թուլացնում են սթրեսը

«Կորրիեր դելա Սերա» պարբերականը գրում է, որ գիտականորեն հաստատվել է ծաղիկների բույրերի «թերապեւտիկ» ազդեցությունը: Դեռ հինուց հայտնի է, որ ծաղկող բույսերից հոտ քաշելը հաճելի է, եւ որ երբեմն այդ բույրերը հանգստացնող ազդեցություն են ունենում մարդու վրա: Բայց հիմա, գրում է հոդվածի հեղինակը, ճապոնիայում հայտնի են դարձել օրգանիզմի վրա ծաղիկների բույրերի դրական ազդեցության գիտական հետազոտությունների արդյունքները:

ճապոնացի մասնագետներն ուսումնասիրել են օրգանիզմի վրա «լինալոլ» նյութի ազդեցության հետեւանքները: Այդ նյութը «պատասխանատու է» նարնջի, խաղողի, մանգոյի, կիտրոնի եւ լաբանդայի ծաղիկների բույրի համար: «Լինալոլը» օգտագործում են արդյու-



նաբերական արտադրության մեջ: Բայց, ինչպես ցույց են տվել փորձարկումները, նյութը ոչնչացնում է արյան մեջ եւ գեներում տեղի ունեցող այն փոփոխությունները, որոնք պատասխանատու են սթրեսի առաջացման համար:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական ծառայության հետեւյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Պեսական հրդեհային ճեշության Տավուժի մարզային հրդեհային ճեշության ճեշական բաժնի (այսուհետ՝ Բաժնի) առաջատար մասնագետ-ճեշուի (ծածկագիր՝ 34/1-3-36)

Վերահսկողություն է իրականացնում հրդեհների հետաքննության եւ վարչաիրավական գործունեության գործառնությունների օրինականության պահպանման նկատմամբ, իրականացնում է հրդեհատեխնիկական հետազոտությունները, արդյունքները ընդհանրացնում է եւ ներկայացնում Բաժնի պետ-ավագ տեսուչին՝ իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաեւ Բաժնի պետ-ավագ տեսուչի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ. Բաժնի պետ-ավագ տեսուչին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթը կկայանա **04.09.2009 թ.**,

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 11.00-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան, Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալաների, խորհրդակալաների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
- այս կետում նշված պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն
- համակարգչի եւ ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ անհրաժեշտ այլ օգնականներին տիրապետում

լու ունակություն, ինչպես նաեւ անհրաժեշտ այլ օրագրային միջոցների տիրապետում

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Աշխատակազմ (ք. Երեւան, Պուշկինի 25) պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ծելը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող

ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացի մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութային ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09.30-ից մինչեւ 12.30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 14.08.2009 թ.:

Մրցութային մասնակցելու ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երեւան, Պուշկինի 25, հեռ. 53 - 07 - 87):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցութային մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

